ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«25» 12 **2020թ.** N 20/1068

«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ

Է. Փոթոյանին

ք. Երևան Աբովյան փ./23
Էլ. հասցե՝ aida.trade@yandex.ru

ՀՎՀՀ 02811842

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 04.02.2020թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-ԲՆԱ2/2 (11/54-2020) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 11.02.2020թ. կնքված N 1 (11/85-2020) համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 15.12. 2020թ. մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ (N 5 չափաբաժնով՝ 1,589,500 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 550 կգ /Քլորամին Բ/, մինչդեռ նշենք որ առաջին խմբաքանակի՝ /200 կգ Քլորամին Բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.06. 2020թ. , երկրորդ խմբաքանակի՝ /150 կգ Քլորամին Բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 30.09. 2020թ. , իսկ վերջին խմբաքանակի՝ /200 կգ Քլորամին Բ/ մատակարարումը պետք է լիներ մինչև 15.12. 2020թ. ;

Հաշվի առնելով մասնակցի կողմից, աշխարհում ստեղծված իրավիճակի՝ կապված COVID-19 համավարակի հետ պատճառաբանությունը, մասնակցին տրվել է ողջամիտ

ժամկետ, պատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքի մատակարարման հնարավորություն, սակայն կրկին ներկայացվել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք:

«ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձարկվող նմուշները /1 փաթեթ 300գ/ ներկայացվել են 04.08.2020թ., 23.09.2020թ. և 16.12.2020թ. լաբարատոր փորձարկման, սակայն, լաբորատորիայի կողմից տրված՝ N 79, N 103 և N 1431 եզրակացության արդյունքում թե առաջին, թե երկրորդ և թե վերջին ներկայացված /Քլորամին Բ/-ի նմուշներում ակտիվ քլորի պարունակության տոկոսը չի համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.-րդ կետը, որի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1. կետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «ԱԻԴԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 158,950 (մեկ հարյուր հիսունութ հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (համաձայնագրի՝ նշված չափաբաժնի ընդհանուր գումարի 10%-ը):

Ա. Հակոբյան

Կատարող՝ Լ. Խաչատրյան
Հեռ. (015) 579-487